ՏԵՂԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԼԱՆ

Համայնք Սևան
Մարզ Գեղարքունիք
Երկիր Հայաստանի Հանրապետություն

2019թ.

Նախաբան
Համայնքի ղեկավարի ուղերձ

Սևան համայնքն իր աշխարհագրական դիրքով, մարդկային և բնական ռեսուրսներով, արդեն իսկ իրականացրած ծրագրերով, ստեղծած լավագույն ավանդույթներով նախանշել է ապագայի իր տեսլականը:

Մեր կարևորագույն նպատակն է՝

ունենալ զարգացած, կազմակերպված, հարմարավետ և ներկայանալի համայնք:

Համայնքը կենդանի օրգանիզմ է և պահանջում է ամենօրյա ուշադրություն, աշխատանք: Ու չնայած իրականացվող աշխատանքներին՝ զգացնել են տալիս նաև համայնքային հիմնախնդիրները, որոնք էլ հաճախ դառնում են խոչընդոտ ծրագրերն իրականացնելիս:

Համայնքում առկա հիմնախնդիրների մեծ մասը տասնամյակների վաղեմություն ունի. բնակարանային ֆոնդի, ներհամայնքային ճանապարհների և փողոցների, կրթամշակութային օջախների շենքային պայմանների արդի վիճակն ուղղակիորեն խոչընդոտում է մի շարք ծրագրերի իրականացմանը:

Տեղական բյուջեի սղությունը, հարկերի հավաքագրման ոչ բավարար վիճակը, ներդրումային ծրագրերի ոչ բավարար լինելը, գործազրկությունը, աշխատատեղերի և արդյունաբերական ձեռնարկությունների բացակայությունը, ներդրումային ծրագրերի սակավությունը, բնակչության անվճարունակությունը, համայնքային մի շարք ենթակառուցվածքների արդի վիճակը, Սևանի զբոսաշրջային կարգավիճակ չունենալը, երիտասարդների՝ բուհական ուսումնառությունից հետո համայնք չվերադառնալը, մարդկանց հարմարվողականությունն այն հիմնական հիմնախնդիրներն են, որոնց ուղղությամբ էլ առաջիկա տարիներին պետք է իրականացվեն հիմնարար քայլեր:

Ծրագրի մշակման ընթացքում կարևորվել են տարբեր խմբերի առաջարկությունները, դիտողությունները, «Սևան երիտասարդական ակումբ» ՀԿ-ի կողմից կազմակերպված ֆորումի ընթացքում ստեղծված «Համայնքային հիմնախնդիրներ. լուծման ուղիներ» փաթեթում ներառված ծրագրային դրույթները, որի շնորհիվ ապահովել է մասնակցային բաղադրիչը:

Կարծում եմ՝ բոլորիս ցանկությունն ու նպատակը մեկն է՝ ապրել լավ ու բարեկեցիկ պայմաններում, զարգացած ու ներկայանալի համայնքում, իսկ տեղական իշխանության համար այդ ցանկությունն իրագործելն ամենօրյա աշխատանք է:

Համայնքի ղեկավար՝ Սարգիս Մուրադյան

Բիզնես պլանի օրինակն ստանալու համար խնդրում ենք կապ հաստատել
ՏՏԶ- պատասխանատու Արմեն Խաչատրյանի հետ

Հասցե՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Սևան
Նաիրյան փող., 164 շենք

(Սևանի տարածաշրջան)

• ընդունարան՝ +374-261-24323 , +374-261-40000

• աշխատակազմի քարտուղար՝ +374-261-40001

Ամփոփագիր

Վարչատարածքային բաժանմամբ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքը ներառում է համանուն քաղաքը, Գոմաձոր, Ցամաքաբերդ թաղամասերը և Գագարին գյուղը: Բնակչության ընդհանուր թիվը 25 844 մարդ է:

Վերլուծությունը ցույց է տվել, որ ավանդական խոշոր արտադրությունների հետ զուգահեռ կայուն աճի ու զարգացման հնարավորություններ կան զբոսաշրջության, գյուղատնտեսական մթերքների վերամշակման, փոքր արտադրությունների խթանման, մասնագիտական ուսուցման ուղղություններով, որոնց հիմքում գերակա պետք ՝ լինի տեղեկատվական տեխնոլոգիաների և այլընտրանքային էներգիայի կիրառության ընդլայնումը տնտեսության տարբեր ճյուղերում:

1. Աղյուսակների, գծապատկերների և հապավումների ցանկ

Աղյուսակ 1. Մասնավոր հատվածի ընկերությունների ցանկը

Աղյուսակ 2. Տեղական համագործակցության գնահատում

Աղյուսակ 3. Զարգացող ոլորտները (ենթաոլորտներ) և նրանց խնդիրները

Աղյուսակ 4. Ֆինանսական ռեսուրսների հասանելիություն

Աղյուսակ 5. Մասնավոր հատվածի կարիքները հողի և ենթակառուցվածքների ոլորտում

Աղյուսակ 6. Կարգավորման և ինստիտուցիոնալ շրջանակ

Աղյուսակ 7Ա. Որակավորված աշխատուժի շուկայում առկա իրավիճակը

Աղյուսակ 7Բ. Պահանջվող հմտությունների և զբաղվածության հնարավորությունների միջև հավասարակշռության ապահովումը տեղական մակարդակում. համակարգային վերլուծություն

Աղյուսակ 8. Համայնքի ընկալումը բնակիչների կողմից

Աղյուսակ 9. SWOT վերլուծություն

Աղյուսակ10. Հիմնական նպատակներն են

Աղյուսակ 11. ներքին մոնիտորինգի պլան

Աղյուսակ 12. Ֆինանսավորմանսխեմա

Հապավումներ

ԵՄ – Եվրոպական Միություն / EU

ՀՀՏԶ – «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման»

ՔՀԿ – քաղաքացիական հասարակության կազմակերպություն

ՓՄՁԶԱԿ – Փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն

ՏԻՄ – տեղական ինքնակառավարման մարմին

ՏՏԶ – տեղական տնտեսական զարգացում

ՀԿ – հասարակական կազմակերպություն

ՈՒԹՀՍ – ուժեղ և թույլ կողմեր, հնարավորություններ և սպառնալիքներ / SWOT

ՄԱԶԾ – ՄԱԿ-ի Զարգացման Ծրագիր / UNDP

ԳՄՀԸ - Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն / GIZ

Պլանի ներածություն

Սևան համայնքը միացել է «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» նախաձեռնությանը 2017թ. օգոստոսի 8-ին: Սևան համայնքը Գեղարքունիքի մարզի 5 քաղաքային համայնքներից մեկն է: Սևան քաղաքը գտնում է ծովի մակերևույթից 1925մ բարձրության վրա, Սևանա լճի հյուսիս-արևմտյան ափին՝ լճից 200-250մ հեռավորության վրա: Սևան համայնքը զբաղեցնում է 1777.08 հահողատարածք: 2016թ-ին հաստատվել է համայնքի /բնակավայրի/ լրամշակված գլխավոր հատակագիծը, որը լուրջ նախադրյալներ է ստեղծում համայնքի զարգացման, առկա ռեսուրսների նպատակային օգտագործման, ներդրումների առումով:

Իր աշխարհագրական դիրքով Սևանը Հայաստանի ամենալեռնոտ շրջաններից է. գտնվում է Արեգունի, Փամփակի և Գեղամա լեռնաշղթաների հանգուցակետում: Համայնքն իր ափամերձ տարածքներով զբոսաշրջությամբ, հանգստի, առողջարանային հիանալի բնակավայր է: Այն առանձնանում է ջրային ռեսուրսներով, բնապահպանական և մշակութային հուշարձաններով: Ներկայումս սոցիալ-տնտեսական զարգացման առաջնահերթություններից է փոքր և միջին բիզնեսի, զբոսաշրջության զարգացումը: Համայնքում զարգացած է ծառայությունների մատուցման ոլորտը, գործում են կրթական, առողջապահական, մշակութային հաստատություններ, սպասարկող կազմակերպություններ և ընկերություններ, բանկային մասնաճյուղեր, կապի օպերատորների մասնաճյուղերի գրասենյակներ: Համայնքի բնակարանային տնտեսության պահպանումն իրականացվում է գործող 6 համատիրությունների միջոցով, որոնք ընդգրկում են 213 բազմաբնակարան շենք: Սևանում է գտնվում «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ը, որի բնագիտական թանգարանն էլ Սևանա լճի, տարածաշրջանի կենդանական և բուսական աշխարհի, ժողովրդագրության, ավանդույթների ամբողջական ցուցանմուշների և ցուցադրությունների եզակի վայր է: Սևանում լույս են տեսնում «Սևան» թերթը «Ափ» ամսագիրը, գործում է «STV-1» հեռուստաընկերությունը: Համայնքը՝ ի դեմս ՏԻՄ-ի, ապակենտրոնացված գործընկերային հարաբերություններ է հաստատել Ֆրանսիայի Գրենոբլ (2004թ.), Լեհաստանի Բրոդնիցա (2010թ.), Բելառուսի Օսիպովիչ (2011թ.), Իտալիայի Ավիլիանա (2016թ.), Չեխիայի Պրահա-

Վինոր (2016թ.), քաղաքների, Երևանի Էրեբունի վարչական շրջանի (2015թ.) հետ: Համայնքում գործունեություն են իրականացնում մի շարք հասարակական կազմակերպություններ, ասոցիացիաներ: Միջին տարիքը՝ 55: Միգրացիան մոտ է հանրապետական միջին վիճակագրական թվերին:

Համայնքի համար հստակ գերակայություն են բնակչության զբաղվածության, միգրացիայի և աղքատության հաղթահարման փոխկապակցված հիմնախնդիրները, որոնց լուծման միջոցներից առաջնայինն իրավամբ համարվում է տեղական տնտեսության զարգացումը: Իր հերթին զարգացման գործընթացն իրագործելի է միայն տեղական ինքնակառավարման մարմիններ- մասնավոր հատված- քաղաքացիական հասարակություն կառույցների սերտ համագործակցությամբ:

Նախաձեռնությանը միանալով՝ համայնքն ակնկալում է տեղական տնտեսության զարգացման պլանի մշակմանն ուղղված փորձագիտական աջակցություն՝ կենսունակ նախագծերի ընտրման ու իրագործման նպատակով: Գրագետ մշակված պլանը հնարավորություն կտա նաև հաջողությամբ իրականացնել անհրաժեշտ ֆինանսական (մասնավորապես՝ դրամաշնորհային) ռեսուրսների հայթայթումը, գրավիչ դարձնել համայնքը ներքին և արտաքին ներդրողների համար:

Սևան համայնքի ավագանու՝26.12 2016թ. թիվ 11-Ն որոշմամբ հաստատել է Սևան համայնքի 5-ամյա զարգացման ծրագիրը: Նշված փաստաթղթի հիմքում դրված է համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման տեսլականը: Տեղական տնտեսական զարգացման պլանը մշակվում է «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» նախաձեռնության շրջանակներում: Այն համընդգրկուն չէ և չի փոխարինում գոյություն ունեցող ծրագրերին, այլ հիմնականում կենտրոնացած է մասնավոր հատվածի զարգացման վրա՝ խթանելու համար տնտեսության աճը, զարգացումն ու զբաղվածությունը:

Տեղական տնտեսական զարգացման պլանի մշակման գործընթացը

Տեղական տնտեսական զարգացման պլանի մշակման նախնական փուլում կազմակերպվել են հանդիպումներ գործարար հատվածի տասնյակ ներ կայացուցիչների, համայնքում գործող մի շարք հասարակական կազմակերպությունների, գործարար հատվածի աջակցության կառույցների հետ: Ներկայացվել են «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» նախաձեռնությունը, նրա նպատակները:

Մասնակցային միջավայրում որոշվել է քայլերի հաջորդականությունը: Մասնավորապես՝ լայն շրջանակով քննարկումներից հետո պլանի մշակման բուն գործընթացի մասնակցային հարթակը՝ աշխատանքային խումբը, ձևավորվել է մասնավոր հատվածի առավել ակտիվ ներկայացուցիչների, ԳԱԱՊ-ի, մի շարք ՀԿ-ների մասնակցությամբ:

Այս ձևաչափով համակողմանի վերլուծություն է անցկացվել ՀՀՏՁ բոլոր հիմնասյուների վերաբերյալ: Քննարկումներ են անցկացվել նաև էներգիայի և ռեսուրսների խնայողության հնարավորությունները համայնքային և մասնավոր հատվածներում օգտագործելու, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման հեռանկարների վերաբերյալ:

Կայացել է հանդիպում նաև Եվրամիության ՀՀՏՁ ծրագրի ներկայացուցչի հետ, համայնքի ղեկավարի և գործարար աջակցության կառույցների ներկայացուցիչների հետ հստակեցվել են գործընթացի մասնակցային ձևաչափերը և փոխադարձ ակնկալիքները:

Գյուղական բնակավայրերի գործարար հատվածի ներկայացուցիչների հետ առանձին անդրադարձ է կատարվել գյուղերում ոռոգման ջրի, հողի և ենթակառուցվածքների շահագործման խնդիրներին:

Աշխատանքային խմբի անդամները և համագործակցության ավելի լայն ձևաչափերի մասնակիցներն իրենց մասնակցությունը կունենան նաև Պլանի իրագործման ու վերահսկողության փուլում:

Տեղական տնտեսության վերլուծություն

Տարածաշրջանի տնտեսական ներուժը բազմազան է: Արագ զարգացող զբոսաշրջությանը զուգահեռ առկա է զարգացած առևտրի ու ծառայությունների ոլորտ: Գյուղական համայնքներում տնտեսության հիմնական ոլորտը գյուղատնտեսությունն է՝ անասնապահությունը և դաշտավարությունը: Տնտեսության առանցքային ճյուղերից է զբոսաշրջությունը, որը և բնակչության զբաղվածության հիմնական աղբյուրներից մեկն է: Զբոսաշրջությունն ունի մեծ ներուժ և համապատասխան ենթակառուցվածքներ զբոսաշրջության ոլորտում որակյալ ծառայությունների մատուցման և սպասարկման համար, մասնավորապես՝ առողջական, էկո, էքստրիմ և ջրային զբոսաշրջության ենթաոլորտներում: Տարածաշրջանում զբոսաշրջության զարգացման նախադրյալներից մեկն առկա բարենպաստ և մեղմ ամառային կլիման է: Մինչ ամառվա ընթացքում Արարատյան դաշտը և Հայաստանի Հանրապետության հարավային շրջանները տառապում են չափազանց բարձր ջերմաստիճանի հետևանքով (մինչև 40 աստիճան ° C), Սևանում օդի ջերմաստիճանը տատանվում է 23-ից 28 աստիճանի միջակայքում (երեկոյան ժամերին ջերմաստիճանը 22-25 աստիճան է): Տարածաշրջանի՝ մեծ հետաքրքրություն ունեցող զբոսաշրջական վայրերից մեկը Սևանա լիճն է: Լճի ընդհանուր մակերեսը կազմում է 1240 քմ, առավելագույն խորությունը 90 մ է: Սևանը տեկտոնիկ ծագման լիճ է, շրջապատված է մի քանի լեռնաշղթաներով: Այն մեծությամբ երկրորդ բարձրադիր քաղցրահամ լիճն է աշխարհում, ինչպես նաև ամենամեծն է Կովկասում: 1978 թ.-ից լճի հարակից տարածքները ներառված են «Սևան »ազգային պարկում, որի պաշտպանական գոտում գրանցված է 1 489 պատմական և մշակութային հուշարձան: Այսօր այս հնագիտական և պատմական հուշարձանները մեծապես նպաստում են շրջանում մշակութային, կրթական և գիտական (հնագիտական, երկրաբանական), էկոլոգիական, էթնոգրաֆիկ և այլ զբոսաշրջության տեսակների զարգացմանը: Միևնույն ժամանակ, տարածաշրջանը հետաքրքիր է ոչ միայն իր պատմության և մշակութային վայրերով. այն Հայաստանի Հանրապետության զբոսաշրջության առավել զարգացած վայրերից մեկն է: Այստեղ են գտնվում բազմաթիվ հյուրանոցներ, տարաբնույթ հանգստի կենտրոններ:

Տարածաշրջանը համարվում է ջրային սպորտի և զբոսաշրջության զարգացման լավագույն վայրերից մեկը:

Առևտրի ոլորտը տարածաշրջանի տնտեսության երկրորդ խոշորագույն ոլորտն է: Աշխարհագրական կենտրոնական դիրքը և ճանաչված տուրիստական վայր լինելը մեծապես նպաստում են այս ոլորտի զարգացմանը: Առևտրի մեջ ներգրավված փոքր ընկերությունները տեղակայված են տարածաշրջանի բոլոր մասերում, ներառյալ՝ Սևան քաղաքը, գյուղական համայնքները, ճանապարհային և ափամերձ գոտիները: Ներկայումս գործում են 5 սուպերմարկետ, 7 շինանյութի, 85 սննդի, 23 հագուստի և այլ կենցաղային ապրանքների խանութներ, 12 գազի և 9 բենզինի լցակայաններ, հուշանվերների և ճանապարհորդական պարագաների 48 փոքր տաղավարներ:

Տարածաշրջանի գյուղական համայնքների տնտեսության հիմքում գյուղատնտեսությունն է: Այստեղ գործում են ավելի քան 1200 ֆերմերային տնտեսություններ: Տարածաշրջանը հատկապես հայտնի է անասնապահությամբ, մեղվապահությամբ, ձկնորսությամբ և բանջարաբոստանային կուլտուրաների աճեցմամբ: Զարգանում և տարածվում է այգեգործությունը: Մրգատու ծառերի ներկրված ցրտադիմացկուն տեսակները ապահովում են բավականին բարձր արդյունավետություն:

Աղյուսակ 1. Մասնավոր հատվածի ընկերությունների ցանկը

Տնտեսական գործունեության տեսակ	Ձեռնարկությունների թիվ ու տոկոս (ըստ դասակարգման)								Ընդամ
	Միկրո	%	Փոքր	%	Միջին	%	Խոշոր	%	
1. Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնաբուծություն	**0**	0	**28**	100	**0**	0	**0**	0	**28**
2. Արդյունաբերական արտադրություն	**5**	75	**1**	25	**0**	0	**0**	0	**6**
3. Շինարարություն, կառուցապատում	**4**	75	**1**	25	**0**	0	**0**	0	**5**
4. Փոխադրումներ, պահեստային տնտեսություն, փոստային և առաքման ծառայություններ	**4**	100	**0**	0	**0**	0	**0**	0	**4**
5. Կապի ծառայություններ	**3**	100	**0**	0	**0**	0	**0**	0	**3**
6. Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ծառայություններ	**5**	100	**0**	0	**0**	0	**0**	0	**5**
7. Ֆինանսական և ապահովագրական գործունեություն	**6**	100	**0**	0	**0**	0	**0**	0	**6**
8. Իրավաբանական ծառայություններ (նոտար, փաստաբան)	**6**	100	**0**	0	**0**	0	**0**	0	**6**
9. Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	**1**	100	**0**	0	**0**	0	**0**	0	**1**

10. Բիզնես ծառայություններ (դասընթացներ, խորհրդատվություն, շուկայի ուսումնասիրություն, PR, գովազդ, տպագրություն)	**1**	100	**0**	0	**0**	0	**0**	0	**1**
11. Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն (հաշվապահություն, ճարտարապետություն, ճարտարագիտություն, գիտահետազոտական գործունեություն, անասնաբուժական ծառայություններ)	**4**	100	**0**	0	**0**	0	**0**	0	**4**
12. Ստեղծագործական ծառայություններ (դիզայն, լուսանկարչություն, տեսանկարահանում, վեբ դիզայն, սոցիալական մեդիա, միջոցառումներ)	**3**	100	**0**	0	**0**	0	**0**	0	**3**
13. Հանրային սննդի կազմակերպում, ռեստորաններ, սրճարաններ, բարեր և այլն	**12**	42	**15**	58	**0**	0	**0**	0	**27**
14. Կացության կազմակերպում, հյուրանոցներ, հյուրատներ և այլն	**12**	80	**2**	20	**0**	0	**0**	0	**14**
15. Սպասարկման ծառայություններ (վարսավիրական, լվացքատան, ավտովերանորոգման, փոքր վերանորոգման ծառայություններ)	**35**	100	**0**	0	**0**	0	**0**	0	**35**
16. Զբոսաշրջություն, զբոսաշրջային և ամրագրման գրասենյակներ	**3**	100	**0**	0	**0**	0	**0**	0	**3**
17. Վարչական և օժանդակ ծառայություններ (վարձակալություն, լիզինգ, զբաղվածություն, անվտանգության և հետաքննական ծառայություններ, վարչական ծառայություններ)	**1**	100	**0**	0	**0**	0	**0**	0	**1**
18. Մանրածախ առևտուր	**200**	100	**0**	0	**0**	0	**0**	0	**200**
19. Մեծածախ առևտուր	**0**	0	**0**	0	**0**	0	**0**	0	**0**
20. Կրթություն	**0**	0	**0**	0	**0**	0	**0**	0	**0**
21. Առողջապահություն և սոցիալական սպասարկում	**15**	100	**0**	0	**0**	0	**0**	0	**15**
22. Մշակութային ժառանգություն, սպորտ, զվարճությունների և հանգստի ծառայություններ	**9**	100	**0**	0	**0**	0	**0**	0	**9**
23. Տրանսպորտ	**3**	100	**0**	0	**0**	0	**0**	0	**3**
24. Թափոնների կառավարում	**1**	100	**0**	0	**0**	0	**0**	0	**1**
25. Կարի արտադրություն /3/, Սննդի պատրաստում և իրացում	**23**	96	**1**	4	**0**	0	**0**	0	**24**
Ընդամենը	**376**	87	**48**	12	**0**	1	**0**	0	**424**

Տեղական համագործակցություն

Հանրային և մասնավոր հատվածներիհամագործակցությանբացակայություննառանցքայինխնդիրէհանդիսանում համայնքի տնտեսական զարգացման, և ընդհանուր առմամբ բնակչության կենսամակարդակի բարձրացման ընդհանուրջանքերիհամատեքստում։
Արժևորմանկարիքունիբունհամագործակցությանգաղափարը՝որպեսկայունզարգացմանգործոն, նչօգտագործվածէմնումերկխոսություններուժը՝փոխադարձվստահությանմակարդակիբարձրացմանմիջոցովառավելլեգիտիմդարձնելումասնակիցկողմերին։

Համայնքում ակտիվ գործունեություն են սկսել առավել մասնակցային լուծումներ առաջարկելու և դրանց իրականացումը վերահսկելու նպատակով 2017թ. դեկտեմբերին ստեղծված՝ համայնքի ղեկավարին կից խորհրդակցական 4 մարմինները, որոնցում ներառված են հանրային և մասնավոր ոլորտների շուրջ 20 ներկայացուցիչներ.

ա) Զարգացման ծրագրերի և տարեկան բյուջեի կառավարման,

բ) Քաղաքաշինության, հողօգտագործման, տնտեսական ենթակառուցվածքների, կոմունալ տնտեսության, շրջակա միջավայրի պաշտպանության և տրանսպորտի հարցերի,

գ) Կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, սպորտի, սոցիալական (այդ թվում՝ երեխաների պաշտպանության) հարցերի։

դ) Համայնք- մասնավոր- հասարակական կազմակերպություններ- համատեղ աշխատանքային խմբով, ձևակերպել Համայնքի տեսլականը և նրա իրականացման քարտեզը։

Որպես համագործակցության գլխավոր պայմաններ են ամրագրվել փոխադարձ վստահության մթնոլորտի առկայությունը, կողմերի իրավասությունների և պարտականությունների հստակությունը, լուծումների փոխշահավետությունը։

Որոշ առանցքային ոլորտներում չկա համագործակցություն, բայց առկա է դրա կարիքը, մասնավորապես՝գործարար հատվածին տեղեկատվության տրամադրման գործուն մեխանիզմի ստեղծումը, ինչպես նաև բնապահպանության՝ կանաչապատման, աղբահանության և սանիտարական մաքրման ոլորտները։ Գործակցությունը զարգացնելու կարիք կա նաև գյուղմթերքների

վերամշակման, մասնագիտական ուսուցման և վերապատրաստման, զբոսաշրջության վերաբերյալ տեղեկատվության համակարգման ոլորտում:

Իրավիճակիբարելավմանհամարհնարավորքայլերնեն՝գործարարտեղեկատվությանտրամադրմանառցանցհարթակիստեղծումը, գործարարհատվածիաջակցությանկառույցներիհետմիասին մշտականգործողոլորտային խորհրդակցական մարմինների գործարկումը՝ ընդգրկելով տնտեսական դերակատարներին, համագործակցային ծրագրերի խթանումը, սոցիալական ձեռնարկատիրության արմատավորումը, բիզնես ծրագրերի հանրային օգտակարության գնահատման և շարունակական վերահսկողության գործիքների կիրառումը, միևնույն ոլորտի տարբեր կառույցների միջև համագործակցության խթանումը:

Համագործակցային միջավայրի բարելավման համար անհրաժեշտ է.

- Հանրային - մասնավոր - ՔՀԿ համագործակցության խթանում, քաղաքացիական մասնակցության ապահովում որոշումների կայացմանը.
- Տնտեսական զարգացման ոչ ֆորմալ խորհրդի վերածում ազատ ձևաչափի մշտական գործող մարմնի՝ ընդգրկելով բոլոր շահակիր կառույցները
- Ծառայությունների՝ մասնավոր ոլորտին պատվիրակման հնարավորությունների հետևողական մշակում:

Աղյուսակ2. Տեղական համագործակցության գնահատում

Անվանումը և/կամ գործառույթը (ոլորտը/թեման, որի շուրջ գործընկերությունն աշխատում է)	Ներառված հաստատությունները /անձինք	Ձեռքբերումները (այստեղ ցույց տվեք նաև, թե ինչպես է այն իրագործվում, օր.՝ պլանավորման փուլում, նախագծերի իրականացում, ծառայությունների մատուցում, գործում է մշտական կամ ոչ մշտական/պարբերական հիմքերով)	Գնահատական՝ օգտակար կամ ոչ օգտակար
Համայնքի ղեկավարին կիցխորհրդակցական մարմիններ	Գործարարներ, ՀԿ-ներ,ՏԻՄ	Պլանավորման փուլում, ոչ մշտականհիմունքներով	օգտակար
ՏՏԶ խորհուրդ (ՏՏԶ պլանի կազմում)	Գործարարներ, ՀԿ-ներ,ՏԻՄ	Բոլոր փուլերում, պարբերական հիմունքներով	օգտակար

Ոչ ֆորմալ խումբ՝ ՏԻՄ – գործարարներ (Ծրագրերի հանրային ազդեցության գնահատում)	Գործարարներ, ՀԿ-ներ,ՏԻՄ	Պլանավորման և իրականացման փուլերում, ոչ մշտական հիմունքներով	օգտակար
Ոչ ֆորմալ խումբ՝ ՄԱԿ-ի ծրագիր – գործարարներ (Զբոսաշրջություն)	Դոնորներ, գործարարներ, ՏԻՄ, կառավարություն	Պլանավորման և իրականացման փուլերում, ոչ պարբերական հիմունքներով	օգտակար
ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամ	ՓՄՁ-ներ, բանկեր	Բոլոր փուլերում	օգտակար
ՀԿ-ների միավորում ըստ հուշագրի (ՀՄԳ խթանում)	ՀԿ-ներ	Բոլոր փուլերում	օգտակար

Տեղականհամագործակցությանուժեղնթույլկողմերն են.

ՈՒԺԵՂԿՈՂՄ	ԹՈՒՅԼԿՈՂՄ
1.Գործակցության նոր, արդյունավետ ձևաչափերի կազմավորման հիմքեր:	1.Փոխադարձ անվստահություն, համագործակցության թերի արժևորում:
2.Գործարար հատվածի և ՀԿ-ների որոշակի մոտիվացվածություն:	2.Շահերի ընդհանրության թույլ հիմնավորվածություն:

Աղյուսակ 3. Զարգացող ոլորտները (ենթաոլորտներ) և նրանց խնդիրները

(Զարգացող) ոլորտ (ենթաոլորտներ)	Հիմնականխնդիրները, որոնց լուծման համար անհրաժեշտ է բիզնեսին աջակցությունը

Գյուղատնտեսություն (ինտենսիվ և օրգանիկ այգեգործություն, հացահատիկային և տեխնիկական մշակաբույսերի աճեցում)	Ֆինանսական ռեսուրսների հասանելիության վերաբերյալ տեղեկատվության սակավություն: Ապահովագրական, վնասների փոխհատուցման մեխանիզմների բացակայություն: Գյուղատնտեսական ժամանակակից տեխնիկայի՝ համայնքի համար ընդհանուր պարկի բացակայություն: Հողօգտագործման շուկայի անկատարություն: Մասնագիտական աջակցության պակաս:
Զբոսաշրջություն (պատմամշակութային, էքստրեմալ և էկոտուրիզմ)	Քայլարշավային, հեծանվավազքի, ժայռամագլցման և այլ զբոսաշրջային հնարավորությունների վերաբերյալ ռեսուրսների գույքագրման բացակայություն, ճանապարհային ուղղորդող նշանների պակաս, շուկայական վերլուծությունների, գովազդի, վերապատրաստումների պակաս, ենթակառուցվածքների թերի զարգացած վիճակ, սերտիֆիկացման ռազմավարության բացակայություն:
Առևտուր	Գյուղմթերքների առևտրի համար կենտրոնացված տարածքների սակավություն, տոնավաճառների, ցուցահանդես-վաճառքների կազմակերպման բացակայություն:
Կրթական և բիզնես ծառայություններ, փոքր արտադրություններ (սննդի, տեքստիլ)	Տեղեկատվության սակավություն: Առկա բիզնես տարածքների՝ նպատակային գործունեության անհամապատասխանություն և անբարեկարգ վիճակ:

Նշված խնդիրների լուծումը ենթադրում է նաև՝

- տնտեսական, այդ թվում՝ պետական սեփականություն հանդիսացող, տարածքների տրամադրման կարգի բարելավում՝ արդյունավետ օգտագործման նպատակով,
- գործարարությանն առնչվող տեղեկատվության տրամադրման համար արդիական լուծումների ներդնում, ՓՄՁ գործունեության խթանում,
- տնտեսական տարածքների նպատակային տրամադրման համար գոտիավորման և անվտանգության չափանիշների կիրառում,
- բիզնես ծառայություններ մատուցողների համար համայնքային տարածքների և ենթակառուցվածքների տրամադրում նպաստավոր պայմաններով:

ՈՒԺԵՂԿՈՂՄ	ԹՈՒՅԼԿՈՂՄ
1.Պաշտոնական կայքի և այլ առցանց գործիքների միջոցով իրազեկում	1. Տեղեկատվության տրամադրման և համագործակցության ոչ մշտական բնույթ
2. Բիզնեսի հետ համագործակցության խրախուսման քաղաքականություն	2. Հստակ ռազմավարական մոտեցման բացակայություն, նոր լուծումների կարիք

4.Ֆինանսական ռեսուրսների հասանելիություն

Համայնքում բանկային համակարգը բավականաչափ ներկայացված է, և որոշակի չափով գործարար հատվածն օգտվում է վարկային ծառայություններից: Շարունակաբար ներդրվում են պետական նոր մոտեցումներ, ներառյալ դրամաշնորհները, տնտեսական և համայնքային ենթակառուցվածքային ծրագրերին տրամադրվող սուբվենցիաները և ներդրումային ծրագրերի վարկային տոկոսների սուբսիդավորումը:

Հաստատություն/ դոնոր (ներառյալ՝ բանկեր և այլ վարկային կազմակերպություններ)	Հնարավոր հաճախորդներ/շահառուներ	Նախընտրելի տնտեսական ոլորտներ/գործունեություն	Հատկացվելիք գումարի նվազագույն և առավելագույն չափ	Պահանջներ(գրավ և այլն)
Բանկեր	Գործարար հատված, անհատ ձեռնարկատերեր	գյուղատնտեսություն, շինարարություն, փոքր արտադրություններ, առևտուր	Բիզնես վարկերի համար՝ մինչև 10 մլն: Գյուղվարկերի համար մինչև 4 մլն: Սահմանափակումները կախված են բիզնեսից	Երաշխավորի պահանջ, գրավի առկայությունը՝ կախված վարկի մեծությունից
Պետբյուջե՝ դրամաշնորհների, սուբսիդիաների և սուբվենցիաների մասով	ՏԻՄ, Գործարար հատված	Համայնքային տնտեսական ծրագրեր, ներդրումային ծրագրեր	Առավելագույնը՝ 75 մլն	ոչ

Դոնոր կազմակերպությունների ներգրավման հստակ կարիք կա՝ առավել վստահելի, բարենպաստ գործարար ծրագրեր կենսագործելու համար: Իրավիճակը բարելավելու համար հնարավոր է նաև ֆինանսական կառույցներին ներկայացնել հիմնավորված առաջարկներ՝ ոլորտային և տեղային ֆինանսավորման առանձնահատուկ պայմանների վերաբերյալ, նպաստել ՓՄՁ ԶԱԿ-ի վարկային երաշխիքների և խորհրդատվական աջակցության մասին, իրազեկության մակարդակի բարձրացմանը:

ֆինանսականռեսուրսներիհասանելիությանուժեղնթույլկողմերն են.

ՈՒԺԵՂԿՈՂՄ	ԹՈՒՅԼԿՈՂՄ
1.Բանկերի բարձր ներկայացվածություն	1. Բանկերի՝ տնտեսական ոլորտների և տեղային գործոնների հետ կապված ծառայությունների և ֆինանսավորման պայմանների թերի դիվերսիֆիկացիա
2.Բազմազան ծառայություններ, այդ թվում՝ պետական աղբյուրներից	Բիզնեսի կողմից գրավի պայմանների բավարարման դժվարություններն անշարժ գույքի բացակայության կամ ցածր գների/ իրացվելիության պատճառով

Հող և ենթակառուցվածքներ

Ժամանակակից պայմաններին բավարարող արտադրական, գրասենյակային, պահեստային տարածքների խնդիրն առկա է բիզնեսի տարբեր տեսակների համար: Սեփականաշնորհման գործընթացում բացակայել են ձեռնարկությունների նպատակային օգտագործման հստակ պայմանագրային պայմանները: Ժամանակի ընթացքում արտադրական ենթակառուցվածքները մաշվում են և կորցնում նախկին տնտեսական գրավչությունը: Անբարեկարգ վիճակը հետաքրքրության նվազման գործոն է դառնում: Գյուղնշանակության հողերը սեփականաշնորհված են:

Աղյուսակ5. Մասնավորհատվածիկարիքներըհողիևենթակառուցվածքներիոլորտում

Մասնավորհատվածիկարիքները՝ ըստենթակառուցվածքիտեսակի	**Ոլորտում առկա պայմաններ**	**Հետագահնարավոր կարիքներ (6 տարվա կտրվածով)**	**Հանրային սեփականություն/վայրեր, որոնք կարելի է զարգացնել**
Միկրոընկերությունկամանհատձեռներեցիաշխատատարածք՝համատեղօգտագործմանընդհանուրհարմարություններովկամառանցդրանց	Կան վարձակալությամբ տրվող տարածքներ	Կարիք կլինի	Վարձակալության տրված, բայց չօգտագործվող բազմաթիվ փոքր տաղավարներ, նաև՝ մասնավոր սեփ.
Գրասենյակայինտարածք՝համատեղօգտագործման ընդհանուրհարմարություններովկամառանցդրանց	Չկա	Կարիք կա	Կօգտագործվի Բիզնես կենտրոնը, որը գտնվում է կառուցման փուլում
Ձեռնարկություններիինկուբատոր (<10 սկսնակ/միկրոընկերություններ, >10 սկսնակ/միկրոընկերություններ)	Չկա	Անհրաժեշտ աջակցությանձև կստանա	Նախկին գործարանների դատարկ տարածքներ (մասնավոր սեփ.)
Ձեռնարկությունների/ արդյունաբերականպարկ	Չկա	Կարիք կլինի	Նախկին երժշտական դպրոցի տարածք
Գիտության/ տեխնոլոգիականպարկ	Չկա	Կարիք կլինի	մասնավոր տարածքներ

Իրավիճակը բարելավելու համար հնարավոր է հողի և ենթակառուցվածքների օգտագործման պայմանագրերում հստակորեն

ՈՒԺԵՂԿՈՂՄ	ԹՈՒՅԼԿՈՂՄ
1. Տնտեսական գործունեության համար հողերի, տարածքների և ենթակառուցվածքների առկայություն	1. Տարածքների գոտիավորման և օգտագործման չափանիշների թերություն
2. Համայնքի կոմպակտություն	2. Դատարկ տարածքների վատթար վիճակ
3. Բնակավայրերի փոխկապակցվածություն	3.Գույքագրման և տեղեկատվության՝ բիզնեսին հասանելիության խնդիր

արտացոլել կողմերի պարտականությունները՝ կիրառելով քաղաքաշինական, բնապահպանական, հանրային օգտակարության համապատասխան չափանիշներ: Հնարավոր է նաև տարեցտարի դատարկ տարածքները մասնակի վերանորոգել և հաձնել շահագործման:

Կարգավորման և ինստիտուցիոնալ շրջանակ

Որոշակի սահմանափակում կա տեղական մակարդակում կարգավորումների իրավասությունների առումով: Հնարավորություն կա կիրառելու համայնքի ավագանու կողմից սահմանվող՝ տեղական տուրքերի և վճարների համարժեքության մոտեցումներ, որպես մրցակցության բարձրացման վարչարարական ռեսուրս՝ օգտագործել տեսչական ստուգումները: Առավել համալիր կանոնակարգման ենթակա է փողոցային առևտուրը:

Աղյուսակ 6. Կարգավորման և ինստիտուցիոնալ շրջանակ

Կարգավորման ոլորտի մարտահրավերներ	**Բացասական ազդեցության բարձր/ցածր աստիճան**	**Հիմնական կարգավորող մարմին**	**Խնդիրները տեղական մակարդակում մեղմելու/բարելավելու հնարավորություն** (մանրամասներ)
Հարկային մասհանումների բացակայություն /անհամապատասխանություն	Բարձր	Կառավարություն, ԱԺ	Առաջարկների ներկայացում հիմնավորումներով
Երկարաժամկետ վարձակալության պայմանագրեր ոչ հստակ չափանիշներով	Բարձր	Կառավարություն, ԱԺ, ՏԻՄ	Առաջարկների ներկայացում, ՏԻՄ-ի համապատասխան որոշումների ընդունում

Տարածքների տրամադրում առանց բիզնես ծրագրերի կամ բնապահպանական կայունության (չվնասելու) հաշվարկի	Բարձր	Կառավարություն, ԱԺ, ՏԻՄ	Առաջարկների ներկայացում հիմնավորումներով, որոշումների ընդունում ՏԻՄ-ի մակարդակով
Համայնքի ներգրավումը պետական հողերի և ենթակառուցվածքների օգտագործման որոշումներին	Բարձր	Կառավարություն, ԱԺ	Առաջարկների ներկայացում հիմնավորումներով
Բիզնես գործառույթների վերաբերյալ փաստաթղթերի շրջանառության պարզեցում	Բարձր	ՏԻՄ	Փաստաթղթերի առցանց շրջանառության ընդլայնում, ժամկետների կրճատում:

ՈՒԺԵՂԿՈՂՄ	ԹՈՒՅԼԿՈՂՄ
Գործարար հատվածի տեղեկացվածության և օրենսդրական իմացության բաձր մակարդակ	Հիմնականում լուծումների՝ ՏԻՄ-ի իրավասության սահմաններից դուրս լինելը: Տեղեկատվության ոչ համակարգված լինելը

Աղյուսակ7. Որակավորված աշխատուժի շուկայում առկա իրավիճակը

Հայաստանի օրենսդրության համաձայն՝ համայնքապետարանի իրավասությունը կրթության բնագավառում սահմանափակվում է նախադպրոցական և արտադպրոցական կրթությամբ:

Գործազրկության մակարդակը համայնքում հասնում է 27 %-ի, որից 10%-ը կազմում են բարձրագույն կրթություն ունեցողները, իսկ 13%-ը՝ միջին մասնագիտական կրթություն ունեցողները: Միջին մասնագիտական կրթություն ապահովող հաստատությունները դեռևս քանակական, կառուցվածքային և որակական հատկանիշների առումով համապատասխան կերպով չեն արձագանքում տեղական աշխատանքային շուկայի պահանջներին: Առկա է անհամապատասխանություն աշխատուժի առաջարկի և պահանջարկի միջև:

Համայնքում զբաղվածության կենտրոնն իրականացնում է որոշակի վերապատրաստումներ, սակայն չի համագործակցում մասնավոր բիզնեսի հետ: Համայնքապետարան, բիզնես, կրթական և վերապատրաստման հաստատությունների միջև համագործակցությունը թույլ է:

Աղյուսակ 7Ա. Որակավորված աշխատուժի շուկայում առկա իրավիճակը

Ոլորտ (Համաձայն Աղյուսակ 1-ի)	**Ընթացիկ վիճակը որակավորված աշխատուժի շուկայում** (օր՝ զգալի/որոշակի պակաս/անհամապատասխանություն/պահանջարկի գերազանցում)	**Կանխատեսվող իրավիճակն ապագայում** (օր՝ զգալի/որոշակի պակաս/անհամապատասխանություն/պահանջարկի գերազանցում)	**Գործողությունների հնարավոր ուղղությունները**
Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն	Պահանջարկի գերազանցում	Որոշակի պակաս	Այգեգործության և հողագործության մասնագիտական դասընթացներ
Արդյունաբերություն	Պահանջարկի գերազանցում	Որոշակի պակաս	Ներդրումներ, գործող ձեռնարկությունների ընդլայնում
Շինարարություն	Անհամապատասխանություն	Որոշակի պակաս	Ներդրումային ծրագրեր
Փոխադրումներ, պահեստային տնտեսություն, փոստային և առաքման ծառայություններ	Պահանջարկի գերազանցում	Համապատասխանում	Ներդրումային ծրագրեր
Կացության և հանրային սննդի կազմակերպում	Պահանջարկի պակաս	Որոշակի պակաս	Օտար լեզվի դասընթացների կազմակերպում

Աղյուսակ7Բ. Պահանջվող հմտությունների և զբաղվածության հնարավորությունների միջև հավասարակշռության ապահովումը տեղական մակարդակում. համակարգային վերլուծություն

Աշխատանքի ներկայիս մեթոդների առավելությունը	Կարևորության աստիճանը (1-5)	Աշխատանքի առկա մեթոդների թերությունները	Կարևորության աստիճանը (1-5)
Բիզնեսի միջավայրի հավասար պայմանների առկայություն	5	Բոլորին հասանելի դարձնելու հմտության պակաս	5
Գործատուների կողմից ներկայացվող պահանջներ	5	Պահանջարկի ներկայացման ոչ թափանցիկություն	5
Մասնագիտական դասընթացներ և խորհրդատվություններ	5	Ոչ պարբերաբար կազմակերպումը	5
Աշխատանքների թափանցիկ կազմակերպում	5	Առցանց ներկայացումները ոչ բոլորին են հասանելի	5
Աշխատանքի բարելավման հնարավոր ուղիներ			
Համագործակցություն համայնքապետարանի զբաղվածության կենտրոնի և գործատուների միջև			
Համայնքապետարան, բիզնես, կրթական և վերապատրաստման հաստատությունների միջև համակարգի ձևավորում			

Աղյուսակ 8. Համայնքի ընկալումը բնակիչների կողմից.

Արտաքին կերպարի դրական կողմերը	Կարևորության աստիճանը (1-5)	Արտաքին կերպարի բացասական կողմերը	Կարևորության աստիճանը (1-5)
Կրթության նկատմամբ բարձր հետաքրքրություն	3	Գործազրկության քաղաք	5
Արդյունաբերական, ինժեներական քաղաք	2	Երիտասարդների արտահոսք	4
Մաքուր օդ, խմելու, հանքային, «տաք» ջրեր	5	Ճարտարապետական անհրապույր տեսք	5
Հանգստի գոտիներ	4	Փակված գործարաններ	3

Հնարավորգործողություններ, որոնքկարելի է հեշտությամբ իրագործել	Պատասխանատու
Վերապատրաստումներ՝ կրթական մակարդակը դարձնել աշխատանքի գործոն, շեշտը դնելով տեխնիկական, տեխնոլոգիական կողմի վրա	ՏԻՄ, ՀԿ-ներ, կրթօջախներ, ԳԱԱՊ
Գործարարության խթանում, գործարար միջավայրի բարելավում	ՏԻՄ, ԳԱԱՊ
Վերահսկողության արդյունավետ մեխանիզմների ներդնում ճարտարապետական տեսքի աղավաղումը կանխարգելելու նպատակով	ՏԻՄ, գործարար հատված, ԳԱԱՊ
Բնակչության շրջանում՝ հատկապես դպրոցական տարիքի, իրազեկման միջոցառումների անցկացում համակեցության կանոնների և սանիտարական մաքրության պահպանման նպատակով:	ՏԻՄ, կրթօջախներ, համատիրություններ, ՀԿ

Արտաքին դիրքավորման և մարքեթինգի ուժեղ և թույլ կողմերն են.

ՈՒԺԵՂԿՈՂՄ	ԹՈՒՅԼԿՈՂՄ
1. Աշխարհագրականբարենպաստ դիրք, բնակլիմայական նպաստավոր պայմաններ	1. Հանրային-մասնավոր համագործակցության ցածր մակարդակ
2. Կրթական բարձր մակարդակ, ինժեներատեխնիկական ներուժ, ազատ աշխատուժի առկայություն	2. Փորձագիտական մակարդակի վերլուծությունների պակաս
3.Գյուղատնտեսական արտադրության և զբոսաշրջության զարգացման պայմաններ	3.Տնտեսական զարգացման հստակ ռազմավարության բացակայություն

Աղյուսակ 9. SWOT վերլուծություն

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• **Համայնքապետարան** Համայնքապետարանի պատրաստակամությունը՝ քաղաքում ներդրումներ կատարելու և տնտնեսության զարգացմանն ուղղված աշխատանքներ իրականացնելու ուղղությամբ: • **Ասֆալտապատ փողոցներ** Համայնքում ասֆալտապատված են կենտրոնական փողոցները ամբողջովին, իսկ երկրորդային փողոցները՝ 70 %-ով: • **Լուսավորություն** Համայնքի գիշերային լուսավորությունը 90 %-ով իրականացված է: • **Աղբահանություն** Համայնքում ամենօրյա ռեժիմով աղբահանություն է իրականացվում: • **Բարերարներ** 30 սևանցիներ, ովքեր ապրելով ՀՀ-ից դուրս, ամեն տարի պարբերաբար ներդրումներ և բարեգործություններ են անում Սևան քաղաքում, աշխատատեղեր են ստեղծում և զբաղվածության կենտրոններ հիմնում: • **Երիտասարդների համախմբվածություն** Սևան համայնքում միջին, երիտասարդ տարիքի անձինք կազմակերպում են քաղաքի տեսլականի պատկերացման վերաբերյալ հանդիպումներ, ունենք ակտիվ արվեստագետներով, մշակութային և նորարարության հատկանիշներով օժտված խմբեր, որոնք ամեն ինչ անում են,	• **Ժամանցի վայրերի բացակայություն** Սևան քաղաքում գրեթե բացակայում են ժամանցի վայրերը՝ բոլոր տարիքային խմբերի համար: Զբոսաշրջիկների պակասը քաղաքում ևս պայմանավորված է այս հանգամանքով: • **Համագործակցության պակաս** Գոյություն ունի համագործակցության պակաս փոքր և միջին ձեռնարկատիրությունների միջև, որի պատճառով տեղի չի ունենում փորձի փոխանակում և համատեղ լուծում պահանջող խնդիրների բացահայտում և վերացում: • **Սպասարկող անձնակազմի գիտելիքի և փորձի պակաս** • **Տոնավաճառների, ցուցահանդեսների, ՓՄՁ ակտիվության այլ խրախուսման ձևերի պակաս:** • **Կրթական համակարգի** և աշխատաշուկայի թույլ կապ, ուսումնական կենտրոնների պակաս: • **Վարկավորման** համար անշարժ գույքի ցածր գրավադրելիություն:

որպեսզի քաղաքը լինի ժամանակակից, մաքուր ,ներկայանալի, նորարական արժեքներով հագեցած (Բոհեմ) • **Խորհրդային ժամանակաշրջանում կառուցված,** չօգտագործվող արտադրական շինություններ՝ ենթակառուցվածքներով: • **Անշարժ գույքի ցածր գներ:** • **Ազատ և էժան աշխատուժի առկայություն:**	
Հնարավորություններ	**Սպառնալիքներ**
• **Սևանա լիճ** • **Բարենպաստ կլիմա** • **Արևափայլի տևողությունը** (23 %-ով բրձր է ՀՀ-ի միջին ցուցաբիշից՝ 2700 ժամ/տարի) • **Աշխարհագրականկենտրոնականդիրք**, տրանսպորտայինխաչմերուկ (Երևան – Սևան – Թբիլիսի, Թբիլիսի – Սևան – Իրան, Երևան – Սևան – ԱրցախիՀանրապետություն) • **Հարուստ խոհանոց** • **«Սևան» ազգային պարկում գրանցված 1489 պատմամշակութային հուշարձաններ:**	• **Սևանա լճի ճահճացմանը վտանգը** • **Հողերի էռոզիա** • **Արտագաղթ**

Տեսլական և նպատակներ

Տեսլականը

Սևանհամայնքնունիբազմաճյուղտնտեսություն՝ավանդականխոշորարտադրություններիհետհամադրվումենկայունզարգացողգյուղատնտեսության, վերամշակողարտադրություններիևզբոսաշրջությանոլորտները, ապահովելովաշխատատեղերիքանակականևորակականկայունաճ: Լայնորենկիրառվումենտեղեկատվականտեխնոլոգիաներիևէներգիայիայլընտրանքայինաղբյուրներիհնարավորությունները.

Նպատակներ

1.Ադմինիստրատիվ ծախսերի կրճատման և համագործակցության բարձրացման ուղղված տեխնիկական աջակցություն փոքր և միջին բիզնեսին.

2. Տուրիզմի և հարակից ոլորտներում գործող ձեռնարկությունների մրցունակության բարձրացմանն և աճին ուղղված խորհրդատվական աջակցություն.

3. Քաղաքի տուրիստական գրավչության բարձրացում:

Աղյուսակ 10. Հիմնական նպատակներն են.

Հիմնասյուներ	*Հիմնական նպատակներ*	*Գործողություններ / նախագծերի գաղափարներ*	*Տևողություն (սկիզբ / ավարտ)*	*Մասնակից գործընկերներ*	*Գնահատված ծախս, Ազգային արժույթով (համարժեքը եվրոյով)*	*Մոնիտորինգի ցուցանիշներ/ Կարճաժամկետ արդյունքների ցուցիչներ և թիրախներ*	*Արդյունքներ/ Վերջնարդյունքի ցուցիչներ և թիրախներ*
1. Տեղական համագործակցություն 2. Հող և Ենթակառուցվածքներ	1. Ադմինիստրատիվ ծախսերի կրճատման և համագործակցության բարձրացման ուղղված տեխնիկական աջակցություն փոքր և միջին բիզնեսին	1.1. Համատեղ օգտագործման 15 աշխատանքային հարթակների ստեղծում բիզնեսների համար	01.08.2018-01.02.2019	Համայնքապետարան, Գեղարքունիքի մարզի ԱԱՊ	80 000	Աշխատանքային հարթակներից օգտված միավոր բիզնեսների քանակը	Բիզնեսների ադմինիստրատիվ ծախսերի կրճատման տոկոսը
		1.2. Համատեղ օգտագործման աշխատանքային սենյակի ստեղծում և կահավորում	01.08.2018-01.02.2019	Համայնքապետարան, Գեղարքունիքի մարզի ԱԱՊ	20 000	Իրականացրած հանդիպումների քանակը	Ձեռք բերված համագործակցության պայմանավորվածությունների քանակը
		1.3. Կոնֆերանս և դասընթացային սենյակների ստեղծում և կահավորում	01.08.2018-01.02.2019	Համայնքապետարան, Գեղարքունիքի մարզի ԱԱՊ	50 000	Իրականացված դասընթացների և կոնֆերանսների քանակը, դրանց մասնակցած մասնակիցների քանակը	Ձեռք բերված համագործակցության պայմանավորվածությունների քանակը

Հիմնասյուներ	*Հիմնական նպատակներ*	*Գործողություններ / նախագծերի գաղափարներ*	*Տևողություն (սկիզբ / ավարտ)*	*Մասնակից գործընկերներ*	*Գնահատված ծախս, Ազգային արժույթով (համարժեքը եվրոյով)*	*Մոնիտորինգի ցուցանիշներ/ Կարճաժամկետ արդյունքների ցուցիչներ և թիրախներ*	*Արդյունքներ/ Վերջնարդյունքի ցուցիչներ և թիրախներ*
1. Տեղական համագործակցություն	2. Տուրիզմի և հարակից	2.1. Ֆինանսական հասանելիության և	01.02.2019-01.02.2020	Համայնքապետարան,	15 000	Դասընթացներին մասնակցած և / կամ	Ներգրավված ֆինանսների և

ն 2. Ֆինանսական միջոցների հասանելիություն 3. Հմտություններ և մարդկային կապիտալ, ներառականություն 4. Արտաքին դիրքավորում և մարքեթինգ	ոլորտներում գործող ձեռնարկությունների մրցունակության բարձրացմանն և աճին ուղղված խորհրդատվական աջակցություն	ներդրումների ներգրավման դասընթացների անցկացում և անհատական խորհրդատվությունների տրամադրում		Գեղարքունիքի մարզի ԱԱՊ, բիզնես ոլորտ, ԶԼՄ		անհատական խորհրդատվություն ստացած բիզնեսների թիվը, դասընթացների քանակը	ներդրումների քանակ
		2.2. Բիզնես պլանավորման դասընթացների անցկացում և անհատական խորհրդատվությունների տրամադրում	01.02.2019-01.02.2020	Համայնքապետարան, Գեղարքունիքի մարզի ԱԱՊ, բիզնես ոլորտ, ԶԼՄ	15 000	Դասընթացներին մասնակցած և / կամ անհատական խորհրդատվություն ստացած բիզնեսների թիվը, դասընթացների քանակը, բիզնես պլանների քանակը	Բիզնեսների եկամտի և արտադրանքի իրացման աճ
		2.3. Արտադրանքի, տեխնոլոգիայի և կազմակերպչական ինովացիայի իրականացման անհատական խորհրդատվությունների տրամադրում	01.02.2019-01.02.2020	Համայնքապետարան, Գեղարքունիքի մարզի ԱԱՊ, բիզնես ոլորտ, ԶԼՄ	15 000	Դասընթացներին մասնակցած և / կամ անհատական խորհրդատվություն ստացած բիզնեսների թիվը, դասընթացների քանակը	Նոր արտադրանքի, կազմակերպչական և տեխնոլոգիական նորամուծությունների քանակ
		2.4. Ընթացիկ հաշվապահության վարման, հարկային օրենսդրության վերաբերյալ դասընթացների անկացում և խորհրդատվությունների տրամադրում	01.02.2019-01.02.2020	Համայնքապետարան, Գեղարքունիքի մարզի ԱԱՊ, բիզնես ոլորտ, ԶԼՄ	15 000	Դասընթացներին մասնակցած և / կամ անհատական խորհրդատվություն ստացած բիզնեսների թիվը, դասընթացների քանակը	Տեղեկացվածության և հաշվապահության վարման գիտելիքների աճ
		2.5 Տուրիզմի ոլորտում աշխատակիցների և գործազուրկների վերապատրաստում, կարողությունների աճ (Հատկապես կանայք, երիտասարդներ և հաշմանդամներ)։	01.06.2019-01.02.2020	Համայնքապետարան, Գեղարքունիքի մարզի ԱԱՊ, բիզնես ոլորտ, Զբաղվածության կենտրոն, ԶԼՄ	15 000	Դասընթացներին մասնակիցների թիվը, դասընթացների քանակը	Աշխատանքի տեղավորված մարդկանց քանակ, աշխատավարձի բարձրացման դեպքերի քանակ

Հիմնասյուներ	*Հիմնական նպատակներ*	*Գործողություններ / նախագծերի գաղափարներ*	*Տևողություն (սկիզբ / ավարտ)*	*Մասնակից գործընկերներ*	*Գնահատված ծախս, Ազգային արժույթով (համարժեքը եվրոյով)*	*Մոնիտորինգի ցուցանիշներ/ Կարճաժամկետ արդյունքների ցուցիչներ և թիրախներ*	*Արդյունքներ/ Վերջնարդյունքի ցուցիչներ և թիրախներ*
1. Արտաքին դիրքավորում և մարքեթինգ	3. Քաղաքի տուրիստական գրավչության բարձրացում	3.1. Քաղաքի տուրիստական գրավչության ներկայացման կայքի ստեղծում	01.10.2018-01.04.2019	Համայնքապետարան, Գեղարքունիքի մարզի ԱԱՊ	1500	Վերագործակված կայք, կայքում ներառված տեղեկատվություն	*Կայքից օգտվողների քանակ, տուրիստների հոսքի աճ դեպի քաղաք*
		3.2. Քաղաքի արտաքին տեսքի բարեկարգում, շենքերի	01.03.2019-01.01.2020	Համայնքապետարան, Քաղաքացիական ակտիվ խմբեր	300 000	Վերանորոգված մայթեր, անցումներ, բնակելի կառույցների հարդարում	*տուրիստների հոսքի աճ դեպի քաղաք*
		3.3. Քաղաքի զբոսայգու վերանորոգում և վերաբացում	01.02.2019-01.02.2021	Համայնքապետարան, ՀՀ կառավարություն	2 000 000	Գործող զբոսայգի, ատրակցիոններ, ժամանցի վարեր	*տուրիստների հոսքի աճ դեպի քաղաք*
		3. 4. Երևան – Սևան մայրուղում վրա երկու մեծ գովազդային ցուցափեղկերի տեղադրում	01.01.2018-01.01.2020	Համայնքապետարան, Գեղարքունիքի մարզի ԱԱՊ	5 000	Տեղադրված երկու գովազդային ցուցանակներ	*տուրիստների հոսքի աճ դեպի քաղաք*
		3. 5. Քաղաքի տարբեր հատվածներում տուրիստական ցուցանակ / քարտեզների տեղադրում	01.06.2019-01.12.2020	Համայնքապետարան,Քաղաքացիական ակտիվ խմբեր	5 000	Տեղադրված	*տուրիստների հոսքի աճ դեպի քաղաք, քաղաքում գործող տուրիստական սպասարկման ձեռնարկությունների հաճախորդների աճ*

Հիմնապատներ	*Հիմնական նպատակներ*	*Գործողություններ / նախագծերի գաղափարներ*	*Տևողություն (սկիզբ / ավարտ)*	*Մասնակից գործընկերներ*	*Գնահատված ծախս, Ազգային արժույթով (համարժեքը եվրոյով)*	*Մոնիտորինգի ցուցանիշներ/ Կարճաժամկետ արդյունքների ցուցիչներ և թիրախներ*	*Արդյունքներ/ Վերջնարդյունքի ցուցիչներ և թիրախներ*
	4.Ֆուտբոլի դաշտիև դպրոցի կառուցում	4.1. Երկկողմանի պայմանագրի կնքում	01.03.2018-01.11.2018	Համայնքապետարան. ՀՀՖ	300 000	Գործող ֆուտբոլի դաշտ և դպրոց	*Տուրիստների հոսքի աճ դեպի քաղաք, տարեկան 4 խաղ*
		4.2.Շինարարական աշխատանքներ	01.03.2019-01.09.2019	Համայնքապետարան. ՀՀՖ	225 000	Գործող ֆուտբոլի դաշտ և դպրոց	
		4.3.Գույքի ձեռքբերում և տեղադրում	01.09.2019-01.03.2020	Համայնքապետարան. ՀՀՖ	75 000	Գործող ֆուտբոլի դաշտ և դպրոց	
		4.4.Ֆուտբոլի դաշտի և դպրոցի բացում	01.06.2020-01.11.2020	Համայնքապետարան. ՀՀՖ		Գործող ֆուտբոլի դաշտ և դպրոց	

Աղյուսակ 11.գործողությունների ներքին մոնիտորինգի պլան

Վերահսկողության մեխանիզմներ

Պլանըներառում է իրագործմանընթացքիմոնիտորինգիհամակարգ՝ գնահատելու ծրագրվածմիջոցառումներիիրականացմանտեմպը, ուղղակիևանուղղակիարդյունքները, որոնցձեռքբերմանըդրանքնպաստելեն: ՏեղականտնտեսականզարգացմանգործընկերությանկողմիցկստեղծվիՄոնիտորինգիհանձնաժողով՝ փոքրխումբ, որումներգրավվածկլինենԳործընկերությաններկայացուցիչները՝ապահովելովսեռային պատշաճհարաբերակցություն: Հանդիպումներըկանցկացվենեռամսյակայինկտրվածքով: Ստորև բերված ենվերահսկողությանհիմնականցուցանիշները:

Գործողություններ / նախագծերի գաղափարներ	*Տևողություն (սկիզբ / ավարտ)*	*Ակնկալվող արդյունքներ 1-6-րդ ամիսներ*	*Ակնկալվող արդյունքներ 6-12-րդ ամիսներ*	*Ակնկալվող արդյունքներ 12-18-րդ ամիսներ*	*Ակնկալվող արդյունքներ 18-24-րդ ամիսներ*
1.1. Համատեղ օգտագործման 15 աշխատանքային հարթակների ստեղծում բիզնեսների համար	01.08.2018-01.02.2019	Աշխատանքները ավարտված են, տարածքը վերանորոգված է և կահավորված			
1.2. Համատեղ օգտագործման աշխատանքային սենյակի ստեղծում և կահավորում	01.08.2018-01.02.2019	Աշխատանքները ավարտված են, տարածքը վերանորոգված է և կահավորված			
1.3. Կոնֆերանս և դասընթացային սենյակների ստեղծում և կահավորում	01.08.2018-01.02.2019	Աշխատանքները ավարտված են, տարածքը վերանորոգված է և կահավորված			
2.1. Ֆինասնական հասանելիության և	01.02.2019-01.02.2020	Դասընթացավարների հետ ձեռք է բերվել	Իրականացվել է 2 դասընթաց, ընդհանուր		

ներդրումների ներգրավման դասընթացների անցկացում և անհատական խորհրդատվությունների տրամադրում		պայմանավորվածություն, իրականացվել է 1 դասընթաց	առմամբ 40 բիզնես մասնակցել է դասընթացին		
2.2. Բիզնես պլանավորման դասընթացների անցկացում և անհատական խորհրդատվությունների տրամադրում	01.02.2019-01.02.2020	Դասընթացավարների հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն, իրականացվել է 1 դասընթաց	Իրականացվել է 2 դասընթաց, ընդհանուր առմամբ 40 բիզնես մասնակցել է դասընթացին		
2.3. Արտադրանքի, տեխնոլոգիայի և կազմակերպչական ինովացիայի իրականացման անհատական խորհրդատվությունների տրամադրում	01.02.2019-01.02.2020	Իրականացվել է անհատական աշխատանք 20 բիզնեսների հետ	Թվով 10 նորամուծության իրականացնում բիզնեսներում		
2.4. Ընթացիկ հաշվապահության վարման, հարկային օրենսդրության վերաբերյալ դասընթացների անկացում և խորհրդատվությունների տրամադրում	01.02.2019-01.02.2020	Վերապատրաստվել է խորհրդատու, աշխատանքներ է տարվել 30 բիզնեսի հետ	Աշխատանքներ է տարվել 70 բիզնեսների հետ		
2.5 Տուրիզմի ոլորտում աշխատակիցների և գործազուրկների վերապատրաստում, կարողությունների աճ (Հատկապես կանայք, երիտասարդներ և հաշմանդամներ)։	01.06.2019-01.02.2020	Հավաքագրվել են մասնակիցներ, վերապատրաստվել են 100 մասնագետներ	40 մասնագետներ աշխատանքի են տեղավորվել		
3.1. Քաղաքի տուրիստական	01.10.2018-01.04.2019	Կայքը պատրաստ է, գտնվում է օնլայն			

գրավչության ներկայացման կայքի ստեղծում		հարթակի վրա			
3.2. Քաղաքի արտաքին տեսքի բարեկարգում, շենքերի	01.03.2019-01.01.2020	Քաղաքի ընդհանուր բարեկարգման աշխատանքները պլանավորված են, գույները, տեսքը և դիզայնի այլ տարրերը որոշված են	Բարեկարգման աշխատանքները ընթանում են պլանավորված տեմպով	Աշխատանքները ավարտված են	
3.3. Քաղաքի զբոսայգու վերանորոգում և վերաբացում	01.05.2019-01.02.2021	Երկկողման պայմանագրի կնքում	Շինարարական աշխատանքները ընթանում են պլանավորված տեմպով	Գույքի ձեռքբերում և տեղադրում	Վերջնական ամբողջական տեխնիկական զննեում և զբոսայգու բացում
3 4 Երևան – Սևան մայրուղում վրա երկու մեծ գովազդային ցուցափեղկերի տեղադրում	01.01.2018-01.01.2020	Դիզայնը ավարտված է, վահանակները տեղադրված են	Վահանակները տեղադրված են		
3 5 Քաղաքիտարբերհատվածներումտուրիստականցուցանակ / քարտեզներիտեղադրում	01.06.2019-01.12.2020	Դիզայնը ավարտված է , տեղադրված է 6 վահանակ	Վահանակաների ինֆորմացիան պարբերաբար թարմացվում է		

Աղյուսակ 12.Ֆինանսավորմանսխեմա

Միջոցառումներ	Գնահատվ ածծախսեր հազ. դրամ/ եվրո	Ֆինանսավորմանաղբյուր				Ֆինան սավոր մանպա կաս	Նշ ում նե ր
		Տեղականբյ ուջե	Պետական, ռեգիոնալբյ ուջեներ ՀՖԴ.	Ձեռնարկո ւթյուններ	Դոնորներ		
1. Ադմինիստրատիվ ծախսերի կրճատման և համագործակցության բարձրացման ուղղված տեխնիկական աջակցություն փոքր և միջին բիզնեսին	**150 000**	**15 000**	**-**	**-**	**135 000**	-	-
1.1. Համատեղ օգտագործման 15 աշխատանքային հարթակների ստեղծում բիզնեսների համար	80 000	8 000	-	-	72 000	-	-
1.2. Համատեղ օգտագործման աշխատանքային սենյակի ստեղծում և կահավորում	20 000	2 000	-	-	18 000	-	-
1.3. Կոնֆերանս և դասընթացային սենյակների	50 000	5 000	-	-	45 000	-	-
2. Տուրիզմի և հարակից ոլորտներում գործող ձեռնարկությունների մրցունակության բարձրացմանն և աճին ուղղված խորհրդատվական աջակցություն	**75 000**	**7 500**	**-**	**-**	**67 500**	-	-
2.1. Ֆինասնական հասանելիության և ներդրումների ներգրավման դասընթացների անցկացում և անհատական խորհրդատվությունների տրամադրում	15 000	1 500	-	-	13 500	-	-
2.2. Բիզնես պլանավորման դասընթացների անցկացում և անհատական խորհրդատվությունների տրամադրում	15 000	1 500	-	-	13 500	-	-
2.3. Արտադրանքի, տեխնոլոգիայի և կազմակերպչական ինովացիայի իրականացման անհատական խորհրդատվությունների տրամադրում	15 000	1 500	-	-	13 500	-	-
2.4. Ընթացիկ հաշվապահության վարման, հարկային օրենսդրության վերաբերյալ դասընթացների անկացում և խորհրդատվությունների տրամադրում	15 000	1 500	-	-	13 500	-	-
3. Քաղաքի տուրիստական գրավչության բարձրացում	**2 306 500**	**230 650**	**2 000 000**	**-**	**6 500**	-	-

3.1. Քաղաքի տուրիստական գրավչության ներկայացման կայքի ստեղծում	1 500	150	-	-	1 350	-	-
3.2. Քաղաքի արտաքին տեսքի բարեկարգում, շենքերի	300 000	50 000	200 000	50 000	-	-	-
3.3. Քաղաքի զբոսայգու վերանորոգում և վերաբացում	2 000 000	200 000	1 800 000	-	-	-	-
3. 4. Երևան – Սևան մայրուղում վրա երկու մեծ գովազդային	5 000	500	-	-	4 500	-	-
3. 5. Քաղաքի տարբեր հատվածներում տուրիստական ցուցանակ / քարտեզների տեղադրում	3 000	-	-	2 000	-	-	-
4.Ֆուտբոլի դաշտի և դպրոցի կառուցում	**300 000**	**30 000**	**270 000**	**-**	**-**	**-**	**-**
4.1. Երկկողմանի պայմանագրի կնքում	-	-	-	-	-	-	-
4.2.Շինարարական աշխատանքներ	225 000	22 500	202 500	-	-	-	-
4.3.Գույքի ձեռքբերում և տեղադրում	74 000	7 400	66 600	-	-	-	-
4.4.Ֆուտբոլի դաշտի և դպրոցի բացում	1 000	100	900	-	-	-	-